

**Ֆրանկովիչն ընդդեմ Լեհաստանի (Frankowicz v. Poland), 2009, (Application no. 53025/99)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան**

Թեմա՝ Խոսքի ազատության իրավունքի սահմանափակում
Ենթաթեմա՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պաշտպանությունը տարածվում է նաև մասնագիտական գործունեության հետ առնչվող խոսքի ազատության վրա
Եզրակացություն՝ խոսքի ազատության իրավունքի խախտում
Սանկցիա՝ կարգապահական տույժ բժշկական էթիկայի նորմերը խախտելու համար Իրավասություն՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Լեհաստան

Փաստական հանգամանքներ

Դիմումատուն մասնագիտությամբ բժիշկ է: Նա հիմնել էր մի ընկերություն, որը հաճախորդների պատվերով մշակում և ներկայացնում էր բժշկական եզրակացություններ:

Դիմումատուն մշակել էր մի եզրակացություն՝ վերնագրված «Քաղաքացիական կարծիք», որը վերաբերում էր պարոն Ջ.Մ-ի բուժմանը: Ջեկույցը մանրամասն կերպով անդրադարձնում էր պարոն Ջ.Մ-ի բուժման պատմությանը՝ սկսած 1980-ական թվականներից: Եզրակացությունը հիմնվում էր պարոն Ջ.Մ-ի բժշկական պատմության գրքույկի վրա, որը ձեռք էր բերվել բուժումը կազմակերպած կլինիկայից: Դիմումատուն եզրակացնում էր, որ պարոն Ջ.Մ-ի առողջական վիճակը թույլ է տալիս վերջինիս դիմելու հաշմանդամության կենսաթոշակի համար: Դիմումատուի եզրակացությունում նշվում էր. «Բժկի այցերի ժամանակ հիվանդը պարբերաբար բողոքել է իր առողջական վիճակից, սակայն կլինիկայի բուժաշխատողները որևէ գործողություններ չէին ձեռնարկել հիվանդի առողջական վիճակը բարելավելու համար»:

Լեհաստանի Տարնո քաղաքի շրջանային իրավաբանը կարգապահական վարույթ էր սկսել դիմումատուի նկատմամբ: Վերջինս մեղադրվում էր ոչ էթիկական վարք դրսևորելու մեջ: Հղում էր կատարվում այն փաստին, որ դիմումատուի եզրակացությունը վարկաբեկել էր հիվանդին բուժող բժիշկներին: Ավելին, իրավաբանը դիմումատուին մեղադրում էր մասնագիտական էթիկայի կանոնները խախտելու մեջ: Նա հայց էր ներկայացրել Տարնո քաղաքի շրջանային բժշկական դատարան, որում պահանջում էր կարգապահական տույժ կիրառել դիմումատուի նկատմամբ:

Շրջանային դատարանը եզրակացրել էր, որ դիմումատուն թույլ էր տվել էթիկայի նորմերի խախտում, քանի որ իր եզրակացությունում նա բացասական կարծիք էր արտահայտել բուժող բժիշկների մասնագիտական գործունեության վերաբերյալ և կարծիքն անմիջապես ներկայացրել էր հիվանդին՝ այսպիսով հեղինակագրելով բուժումը կազմակերպած բժիշկներին: Դիմումատուն դատարանի վճիռը բողոքարկել

էր, սակայն վերին աստյանի դատարաններն ուժի մեջ էին թողել առաջին աստյանի դատարանի վճիռը:

ՄԻԵԴ-ի վերլուծությունն ու եզրակացությունը.

«Արտահայտվելու ազատությունը, երաշխավորված 10-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ, ժողովրդավարական հասարակության առանցքային հիմնասյուներից է եւ նրա առաջնությանը, ինչպես նաեւ յուրաքանչյուր անհատի ինքնադրսեւորման հիմնական պայմաններից մեկը: Պայմանով, որ այն համապատասխանում է 2-րդ պարբերության սահմանափակումներին, այս ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարյացակամորեն կամ անտարբերությամբ են ընդունվում կամ համարվում են անվնաս, այլեւ այնպիսիների, որոնք վրդովեցուցիչ, ցնցող կամ անհանգստացնող են: Դա է բազմակարծության, հանդուրժողականության եւ լայնախոհության թելադրանքը, առանց որի չկա «ժողովրդավարական հասարակություն»:

ՄԻԵԴ-ը կրկին նշում է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը խոսքի ազատության իրավունք է երաշխավորում յուրաքանչյուր անձի: Դատարանը բազմիցս եզրակացրել է, որ 10-րդ հոդվածը տարածվում է բոլոր տեսակի տեղեկատվության կամ գաղափարների կամ արտահայտության ձևերի նկատմամբ, այդ թվում երբ խոսքը վերաբերում է շահույթի ստացմանը կամ դիմումատուի առևտրային գործունեությանը:

ՄԻԵԴ-ը պետք է միջամտությունը դիտարկի գործի բոլոր հանգամանքերը համադրելով և որոշի, թե արդյոք այն «համաչափ է եղել օրինական նպատակին» և արդյոք միջամտությունը հիմնավորելու նպատակով ազգային մարմինների ներկայացրած պատճառներն «վերաբերելի են և բավարար»: ՄԻԵԴ-ը պետք է հավաստիանա, որ ներպետական աստյանների կիրառած սկզբունքները համահունչ են Կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված սկզբունքներին և որ վերջիններս հիմնվել են համապատասխան փաստերի ընդունելի գնահատումների վրա:

Անդամ պետություններն ունեն որոշ «հայեցողական լուսանցք» միջամտության անհրաժեշտությունը գնահատելու առումով, սակայն այդ հայեցողությունը ենթակա է ՄԻԵԴ-ի վերահսկողությանը ինչպես համապատասխան կանոնների, այնպես էլ դրանց կիրարկման որոշումների առումով:

ՄԻԵԴ-ը պետք է նախ որոշի, թե դատարանի մեղադրական վճիռը հանդիսացել է արդյոք միջամտություն դիմումատուի խոսքի ազատության իրավունքի նկատմամբ: Դատարանն հաստատում է, որ մասնագիտական գործունեությանն առնչվող հարցերը դուրս չեն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պաշտպանությունից: Այդ պատճառով, ՄԻԵԴ-ը գտնում է, որ ներպետական դատարանի մեղադրական վճիռը և քննադատական կարծիք արտահայտելու համար կիրառված կարգապահական տույժը հանդիսացել է միջամտություն դիմումատուի խոսքի ազատության իրավունքի նկատմամբ:

Դատարանը պետք է քննարկի, թե միջամտությունն արդյոք «նախատեսված է եղել օրենքով», արդյոք այն հետապնդել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի օրինական նպատակներից մեկը և «անհրաժեշտ է եղել արդյոք ժողովրդավարական հասարակությունում»:

ՄԻԵԴ-ը գտնում է, որ միջամտությունը նախատեսված է եղել օրենքով և դիմումատուի խոսքի ազատության իրավունքի սահմանափակումը նպատակ է ունեցել պաշտպանել այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը:

Ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտության առնչությամբ ՄԻԵԴ-ը գտնում է հետևյալը.

Դատարանը նախկինում իրավաբանների առնչությամբ ընդունել է, որ մասնագիտության հատուկ բնույթը կարևոր է հաշվի առնել գերակա սոցիալական կարիքը գնահատելիս: Բժիշկները նույնպես վստահության վրա հիմնված հատուկ հարաբերություններ ունեն իրենց հաճախորդների հետ: Մյուս կողմից էլ ՄԻԵԴ-ը գտնում է, որ հիվանդն իրավունք ունի խորհրդակցելու մեկ այլ բժշկի հետ բուժման վերաբերյալ երկրորդ կարծիք ստանալու նպատակով: Այն փաստը, որ եզրակացությունը տրամադրվել է դիմումատուի առևտրային գործունեության շրջանակներում և այն էական էր մեկ այլ բժշկի մասնագիտական գործունեության համար, չի գրկում դրան ճշմարիտ և օբյեկտիվ լինելուց: ՄԻԵԴ-ը գտնում է, որ ներպետական աստիճանները գտնելով, որ դիմումատուն վարկաբեկել է մեկ այլ բժշկի, չեն փորձել պարզել ներկայացված եզրակացության ճշմարտացիությունը:

ՄԻԵԴ-ը գտնում է, որ դիմումատուի եզրակացությունը չի հանդիսացել անձնական բնույթի հարձակում մեկ այլ բժշկի վրա, այլ հանդիսացել է քննադատողական գնահատական բժշկական տեսանկյունից: Այդպիսով, այն հանրային հետաքրքրություն ներկայացնող հարց է հանդիսանում:

ՄԻԵԴ-ը եզրակացրեց, որ միջամտությունը համաչափ չի եղել օրինաչափ նպատակին և, այդպիսով, անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում այլոց իրավունքները պաշտպանելու համար: Այդպիսով, տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: